

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի 2010թ.

երկրորդ եռամսյակի գործունեության հաշվետվություն

1. Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկում, ցանցային սարքավորումների պահպանում

- կատարվել են Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) ընթացիկ սպասարկման աշխատանքները (ՀԴԻՑ-ի կառավարում և աշխատանքի հսկողություն, ՀԴԻՑ-ի վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի շահագործում և այլն),
- հաշվառվել են ՀԴԻՑ-ի խափանված սարքավորումները, դրանց փոխարինման համար անհրաժեշտ սարքավորումներ գնելու նպատակով նախապատրաստվել և հայտարարվել է «Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների» գնման մրցույթը:

2. Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի շահագործում

- իրականացվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի շահագործումը՝ ուսուցիչների և աշակերտների համար դասընթացներ են կազմակերպվել Վայոց ձորի մարզի Սերս, Սյունիքի մարզի Վաղատուր և Սալվարդ, Գեղարքունիքի մարզի Լճափ և Ծովասար համայնքներում, ինչպես նաև՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) Բերձոր քաղաքում:

3. 300 նոր դպրոցների միացում և ընդգրկում Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում

- ամփոփվել է «300 դպրոցների միացում Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցին» ծառայության գնման մրցույթը, հաղթող կազմակերպության՝ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի հետ կնքվել է պայմանագիր:

4. «Կրթական համալիր էջ» պորտալի շահագործում և ԿՏԱԿ-ի կայքի վարում

- իրականացվել է «Կրթական համալիր էջ» պորտալի (<http://armedu.am/>) շահագործումը՝ պարբերաբար թարմացվել է կրթական տեղեկատվությունը, հարստացվել են կրթական փաստաթղթերն ու մեթոդական պաշարները, համալրվել են «Հանրակրթություն» բաժնի

տարբեր առարկաների էլեկտրոնային ուսումնական պաշարները, գործարկվել է «Միասնական և ավարտական քննություններ 2010» բաժինը,

- տեղադրվել և շահագործվել է կրթական պորտալի նոր ֆորումային համակարգը (<http://forum.armedu.am/>), ստեղծվել են 13 հիմնական բաժիններ, որոնցում արձարծվել են 96 թեմաներ (այդ թվում՝ ավագ դպրոցի 10 առարկաների նոր դասագրքերի «ձեռագրերի» վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ և համապատասխան գրառումները ներկայացվել են «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ),
- պորտալում հայտարարվել և ամփոփվել են «Ազատ հայրենիք» թեմայով շարադրությունների առցանց մրցույթը և Հովհաննես Թումանյանին նվիրված վիկտորինան,
- Երևանի հ.105 ավագ դպրոցում անցկացվել է խորհրդակցություն «Դպրոցում ինֆորմատիկա առարկայի դասավանդման արդյունավետությանը նպաստող միջոցներ» առցանց խորհրդաժողովի մասնակիցների, «Ազատ հայրենիք» խորագրով շարադրությունների մրցույթի և Հովհաննես Թումանյանին նվիրված վիկտորինայի հաղթողների մասնակցությամբ, կազմակերպվել է պատվոգրերի, վկայականների և մրցանակների հանձնման արարողությունը,
- իրականացվել է ԿՏԱԿ-ի կայքի (<http://www.ktak.am/>) շահագործումը:

5. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործունեության կազմակերպում: Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն, հրատարակում

- կատարվել են «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2009-2010 ուսումնական տարվա գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվությունների տվյալների ամփոփման և հանրակրթության 2009-2010 ուսումնական տարվա տեղեկատվական հիմնապաշարի ստեղծման աշխատանքները,
- հանրակրթության ոլորտը բնութագրող ամփոփ վիճակագրական տեղեկանքներն ու աղյուսակները կազմվել և ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Ազգային վիճակագրության ծառայություն, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակ,
- կազմվել և հրատարակման համար նախապատրաստվել է «Հանրակրթությունը Հայաստանում 2009-2010 ուսումնական տարում» ամենամյա վիճակագրական տեղեկագիրը (180 աղյուսակ, 211 էջ):

6. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում

- ՏՀՏ ոլորտի կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով`
 - մասնակցություն Երևանի հ.177 դպրոցի կազմակերպած «Համակարգչային մշակումների կիրառումը դասի ընթացքում» մրցույթի հանձնաժողովի աշխատանքներին և ամփոփիչ սեմինարին,
 - մասնակցություն «Էլեկտրոնային կրթությունը Կովկասում-2010» (ք.Թբիլիսի) միջազգային համաժողովի աշխատանքներին և երկու զեկուցումների ներկայացում,
 - մասնակցություն Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի մշակած «Էլեկտրոնային գրադարանների «ELGRAD» համակարգի քննարկմանը,
- ի կատարումն ՀՀ վարչապետի 2010թ. հունվարի 25-ի հ.02/24.2/507-10 հանձնարարականի և ՀՀ կրթության և գիտության նախարարի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներին համակարգչային համակազմ հատկացնելու մասին» 19.02.2010թ. հ.61-Ա/Ք հրամանի իրականացվել են ԼՂՀ հինգ ավագ դպրոցներում տեխնոլոգիական դասարանների ստեղծման աշխատանքները,
- Ստեփանակերտում Արցախի բարձր դասարանի աշակերտների մասնակցությամբ անցկացվել է սեմինար-քննարկում, որի ընթացքում ներկայացվել են «Կրթական համալիր էջ» պորտալի հնարավորությունները և ուսումնական գործընթացում էլեկտրոնային ձեռնարկների կիրառման առանձնահատկությունները: